

# Մարգարետ Գազիկ Միրիջանյանի ուղերձը Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ

01.10.2018



Ավագ սերնդի սիրելի ներկայացուցիչներ, հարգելի տատիկներ և պապիկներ, Մրտանց շնորհավորում եմ Ձեզ Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ: 1991 թվականին ՄԱԿ-ը հոկտեմբերի 1-ը հռչակեց Տարեցների միջազգային օր: Այս օրը հրաշալի հնարավորություն է մեր խորին երախտագիտությունը հայտնելու մեր ավագ սերնդի ներկայացուցիչներին, որոնք վաստակել են երջանիկ ծերության իրավունքը, և առիթ՝ անդրադառնալու տարեց մարդկանց խնդիրներին, դրանց լուծման ուղիներին:

Այս օրը ևս մեկ անգամ մեզ պարտավորեցնում է, որ ջանք չխնայենք, որպեսզի տարեցներն ապրեն արժանապատիվ կյանքով և շրջապատված լինեն սիրով, խնամքով և հոգատարությամբ, իրենց հասարակության լիարժեք անդամ զգան: Մենք պետք է հատուկ ուշադրություն, ջերմություն և վերաբերմունք դրսևորենք հատկապես ծերանոցներում, տուն-ինտերնատներում հանգամանքների բերումով իրենց օրերն անցկացնող տարեցներին:

Կրկին անգամ շնորհավորելով Տարեցների միջազգային օրը՝ ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր տատիկներին և պապիկներին՝ իրենց կյանքի փորձը մեզ փոխանցելու, օգտակար խորհուրդներով շատ փորձություններից հեռու պահելու, ինչու չէ նաև մեր դարավոր ավանդույթները պահպանելու և փոխանցելու համար: Թող Ձեր աչքերը երբևէ չթախծեն, այլ ուրախության, երջանկության արցունքներով փայլեն և միշտ շրջապատված լինեք հարազատ մարդկանցով... Աստված Ձեզ պահապան: